

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopedie مجموعة علوم

ԽՐԱԳՐԱԳԵՏ-ՏՆՈՐԷՆ
Ղ. ԲՈՒԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 19

1898 ՅՈՒԼԻՍ 11

Ամեն տեղի համար Տարեկան կանխիկ **50** դահեկան վեցամսեայ **26**, իսկ եռամսեայ **13** դահեկան : Օտար երկրաց համար տարեկան կանխիկ **15** ֆրանկ : Թղթատարի ծախքը եւրագրութեան կը վերաբերի : Հասը **40** փարայ : Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի **100** դրուէի տեղ **105** դրուէ :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ. — Մեր որոշումները :

ՄԻՂՐ. — Երկու բարեկամներ :

Ղ. ԲՈՒԱՏ. — Ժողովրդական կենդանաբանութիւն. — Ճանճը :

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ. — Հողին խմորիտները :

ՏԱՆՏԻԿԻՆ. — Առանցիկ սնտակալանք. — Շուռուարներ. — Մրգողիներ. — Խոհանոցի բաժինը :

Տ. ՊՅԱՃԵԱՆ. — Հերովցի պատկեր : Գիտական խնդիրներ :

Բառարան. — Միամտորէն բացատրութիւն :

Զբօսանք. — Զուարճալիք : Հանելուկ թիւ 10 :

Թղթակցութիւնք. —

Հատը 40 փարայ

Կ. ՊՈՒԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Զ. ԱՐԱՄԵԱՆ

Կ Պոլիս, Մահմուտ-խան, Բիւրեճի խան քիւ 26

ՉԲՕՍԱՆՔ

ՀԱՅԵՍՏԱՆԻ ԹԻՒՆ 9

Առաջին անգամ լուծած է Պ. Մարտիրոս Արայճեան հետեւեալ կերպով:

Գոյն է ըսի յամառեցայ,
Դրոխն կտրել չ'աջողեցայ.
Երբ վերջին տուն կընթեռնուի,
Քնարի քաղցր ձայն կ'առնէի.
Կը հաւատա՞ս, դո՛ւ Նիկողոս,
Եկած ձայնն է յոյժ քաղցրախօս:
Երգիչ «քնար» ն ետ դարձուցի,
Իրեն վերայ շատ խղճացի
Երբ տեսայ այն՝ գլուխ չունէր,
«Եէջ» զիրն այդ տեղ շատ պէտք ունէր:
Ըսեմ քեզի լուծումն արագ,
Ըսեմ ու լսեմ, բառն է «երանք»:

ՄԱՐՏԻՐՈՍ ԱՐԱՅՃԵԱՆ

Հանրագիտակի 3-րդ խնդիրը որ առաջարկուած էր թէ 9 հատ միեւնոյն տեսակ թուանդաններով զոր որինակ 6 ու 1000 կազմել:

Ամենէն լաւագոյն կերպով լուծած են:
Սկիւտար — իճատիէ Ներս. Վարժարանի բարձրագոյն կարգի ոչակերտներէն Օննիկ Համբարձումեան. Հրանտ Քաւրամաճեան. Աւետիս Զրուանդեան. Սարգիս Ալեանաքեան. Հայկ Մահֆաղաճեան. Օննիկ Արապեան: Հետեւեալ կերպով:

1111	111	1000	4444	444	1000
1	1		4	4	
2222	222	1000	5555	555	1000
2	2		5	5	
3333	333	1000	6666	666	1000
3	3		6	6	

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պոլիս, Մերձան փողոց թ/ւ 57

Հաստատու 1805.

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԵԱՆՔ

Մանկանց գիրքը կամ Հարպիկ ֆեռական պատկերազարդ. բոլորովին նոր սճով, Հատը 5 փարայ:

Մարգարիսներ, Մանկապարտէզի-Մաղկոցի մանուկներուն համար. կ'ուսուցանէ բազմաթիւ ձեռագիր օրինակներու վրայ կարգաւ գրել, եւ կը բովանդակէ երգեր, խաղեր, առակներ եւ հանելուկներ: Գին 40 փարայ:

Սիրուն զբօսարան, Մանկանց երկրորդ գիրքը, կը պարունակէ մանկական երգեր, կարճ հատուածներ, առակներ, բարոյալից փոքրիկ պատմութիւններ եւ անուածներ: Ըստիպ. Գին 2 զր:

Ոսկեմատենիկ Հայ տղայոց. երկրորդ գիրք

ընթերցանութեան. Գ. տղազրուութիւն 120 պատկերներով. կը բովանդակէ բարոյական գեղեցիկ պատմութիւններ, ստանաւորներ, երգեր, առակներ, կրօնական եւ գիտական ամենակարեւոր գիտելիքներ, եւայլն: Գիրք մը՝ արժանի իր տնուան եւ պիտանի ամէն Հայ տղայոց: Գին 4 զրու:

Մանկավարժական ֆեռականութիւն պատկերազարդ. մասն. Ա. Բ. կ'ուսուցանէ՝ պատկերներու վրայ՝ Հայ լեզուի քերականութեան նախագիտելիքը եւ ութը մասունք բանին 100է աւելի միծ եւ փոքր պատկերներու վրայ: Գին լաթակազմ Ա. մասի 50 փարայ, իսկ Բ. մասի 100 փարայ:

Սրբազան պատմութիւն հին եւ նոր կտակարանի, պատկերազարդ. Զ. տղազրուութիւն. նախնական կարգերու համար ամբողջապէս մ'է: Գին 100 փր:

Գեղեցիկ զբօսարան տաճկախօս տղայոց, կամ Վարժութիւն Հայ խօսակցութեան եւ ընթերցման. Ա. եւ Բ. տարի. պատկերազարդ: Փորձով հաստատուած է թէ մէկ տարուան մէջ տաճկախօս տղայք կը կարգան ու կը խօսին հայերէն: Գին Ա. մասի 100 փր., Բ. մասի 3 զր:

Մարմնամարզութիւն ստողջապահական եւ բժշկական, արանց, կանանց եւ փոքր տղայոց. առանց գործիքի. բոլոր վարժարաններու յարմար: Գին 4 զր:

Հայերէն լեզու կամ վարժութիւն գրաբարի. Բոլորըդանի զրուութեամբ. բոլորովին նոր սճով, Գին 4 զր:

ՎԵՐՋԻՆ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ ՁԵՒՅՅ ՄԱՆ

Ով որ կուղէ վեց տարուան մէջ ուսանելիք Հայ. ե Յրանա. գրական բարձրագոյն լեզուն, սորվիլ ձեկ սարուան մէջ, գիմել առ Վարչութիւն Հանրագիտակի, Արամեան տպարան:

ԴՊՐԱՊԵՏԱՅ ԱԶԻԸ ԼՈՅՍ

Թէ սաւառտեան Սրբազան երգեցողութիւնք եւ թէ ի գէմն Ս. Պատարագի երգեցողութիւնք հրատարակուած են, փոքրիկ դպիրներու համար: Գինը 20 փարա կը գտնուի Վ. Յ. Մարգարեան գրատունը, Մերձան փողոց թիւ 57:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopedie مجموعة علوم



Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 19

1898 ՅՈՒԼԻՍ 11

ՄԵՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հանրագիտակ կարգացող շատ կայ-
երբ ասիկա տեսանք, յանձափա ուրա-
խացանք, և հրապարակաւ մեր ուրա-
խութիւնը յայտնելէ ալ չի քաջուեցանք,
Հայ ժողովուրդի ընթերցասիրական ճա-
շակը երեւան հանելու նպատակաւ, եռոյց
այդ միջոցին՝ մեր ուշադրութենէն կա-
րեւոր կէտ մը վրիպած էր, զոր այժմ
ցաւելով և ակամայ մասնանիչ ընել պի-
տի պարտաւորինք:

Մեր ժողովուրդը ընթերցասէր է որ-
դարեւ, բայց միեւնոյն անգամ լրացրա-
կան և գրեհական հրատարակութեանց
ալ ճշմարիտ մակարոյժ մը:

Անոնք աւելի կը նախընտրեն ձրի ըն-
թերցանութիւնը (իբր մակարոյժ), քան
վճարումով հրատարակիչներու քոջալեր
կարգաւրու վեհանձնութիւնը: Անվայել
ունակութիւն մը չէ՞ այս, որով հրատա-
րակիչները վհատութեան կը մասնեն, և
անկէ վերջն ալ կ'ելլեն կ'ըսեն թէ՝ —
առանց իսկ կարմրելու — «Երաւ'ր, ոչ
շնորհքով հրատարակիչ ունինք, ոչ ալ
շնորհքով գրողներ»: Եւ գիտադրութիւնը

հոն է որ, այդ լեզուն դորժած ուղները,
ամենէն աւելի մակարոյժ նկատուած-
ներն են: Այդ Պարոնները երբէք նկա-
տողութեան չեն առնիր թէ, թերթ մը
ինքնին չի կրնար հրատարակուիլ, անի-
կա ամենօրեայ անհրաժեշտ ծախքերու
զգալի պէտքն ունի: Թղթավաճառը ա-
պառիկ չի տար, դրօշմի տուրքը (2 վա-
րա իւրաքանչիւր թերթի) կանխիկ է.
գրաշարը ձրի աշխատելու առաջինու-
թիւնը չ'ունի, տպարանը նոյնպէս, թող
զկանոյս և զմանկտիւ: Եւ եթէ վճա-
րումով այդ ծախքերը դոցեւ չի մատ-
նակցի ժողովուրդը, անիկա պիտի սրա-
տուոյի յուսահատութեան վարկեանի մը
մէջ, առ յաւ էտ մնար բարով ըսելու...
Ա՞՞վ է յանցաւորը սակայն, հրատարա-
կիչը՝ թէ ժողովուրդը: Առաջինը ամեն
տեսակէտով շատ վեհանձնօրէն վարուած
է հանգէպ երկրորդին, մինչդեռ այս
վերջինը, գծուծ և անվայել շահախնդ-
րութիւններով, միշտ չարաչար դորժա-
ծած է անոր վեհանձնութիւնը: Բայց
այս ամենուն մէջէն իրապէս տուժողը
ս՞վ է: Հրատարակիչը առտուաւելի դրա-
մական կորուստ մը ըրած պիտի ըլլայ:

մինչդեռ ժողովուրդը նիւթ ապէս թէ բարւոյն ապէս, հրատարակիչէն աւելի տուած պիտի ըլլայ, այդ մակաբոյժերու չաւակելի արարքին հետեւանօք:

Սակայն այդ մակաբոյժ դասակարգը պիտի կրնայ արդարանալ անոնց քով, որոնք թերթի մը պարունակութենէն շահագրգռելով, բաժանորդ կը գրուին բայց ԴՐԱՄ՝ ՉԵՆ ՎՃՍՐԵՐ: Առթիւն օգտուել կը փորձեն այսպէս, առանց հաշուելու թէ, իրենց մտային զարգացման կաթ ջամբող Աղբիւրին ճամբաները կը գտնեն. և այնուհետեւ կ'եղեն կը գտնուին որ, մեր մէջ թերթերը յարատեւ պարտութիւն չեն ունենար, թէ անոնք առաւելի մը պէս յանկարծ կը փայլին և կը մտնեն: Ո՞վ է պատճառը: Երբ այդպիսիներէն սխալմամբ բաժնեգին խնդրել վարձէք, իրենց արժանապատուութիւնը վիճաւորուած կ'զգան. կը բարկանան, և մինչեւ իսկ անհաճոյ տպաւորութիւն մը կը ձգեն ձեր վրայ...: Եթէ այդպիսիները իրաւունք մանցնալ գիտնան, և հրատարակչին հրաւերներուն դէմ անըզդայ և խուլ չի գտնուելով իրենց պարտքը վճարեն, ինչո՞ւ թերթը պիտի գոյուի: Արդեօք իրենց վաճառատան մէջ ձախու գրուած ունէ ապրանք, երբ իրենցմէ ձրի առնել փորձուի, այդ պարագային հաճոյակատարութեամբ շնորհակալ պիտի ըլլան: Անշուշտ ո՛չ, ինչո՞ւ համար ուրեմն հրատարակուած թերթի մը կամ գրքի մը նկատմամբ ալ այդ կերպ վարուիլ չեն ուզեր, և հրատարակչին իրաւունքը բռնաբարել կը փորձեն: Անիրաւութիւն չէ՞ ասիկա. ուղղամիտ մարդու գործ է այս: Եւ սակայն անգամ մ'եւս տխուր իրողութիւնը կուգայ մեր աչաց առջեւ պատկերանալ, երբ այս ամենուն պատճառը վնասուելու ելլենք, որ ատեն պիտի տեսնենք թէ, մեր դպրոց-

ներու մէջ արուած ձախող դաստիարակութեան հետեւանքն է. որու վրայ ծանրանալ չեմ ուզեր նիւթէս չի շեղելու համար:

Շատեր կ'ըսեն. «Ի՞նչ հարկ կայ մէկ քանի թերթեր հրատարակել. մէկ թերթ մը կը բաւէ, կ'առնես կը կարդաս, և կարեւոր անցքերուն վրայ դաշտափար մը կազմելով, հետաքրքրութիւնդ գոհացուցած կ'ըլլաս»: Բայց եկու հայէ որ իրողութիւնը այդպէս չէ: Աղբիւր մը մտային զարգացման կարողութիւնը՝ իր մէջ հրատարակուած թերթերու շատութենէն կը չափուի. որովհետեւ որչափ թերթեր չառնան, այնչափ անոնք իրարու հետ պիտի մրցին շարունակ ճիւղ և օգտակար պարունակութիւններով: Իպրոցէն վերջը, թերթերն են որ ժողովուրդին մտային զարգացման անունը կը մատակարարեն. և քանի որ մեր մէջ թերթերը քաջախելութիւն չեն գտներ, ըսել է մեր մտային զարգացումը շատ սահմանափակ է: Մենք աւելի կը սիրենք մեր ժամանակը դատարկութիւնով կամ ապարդիւն զբաղումներով վատնել, քան օգտակար ընթերցումներով, որոնք մեր անտեսական վիճակը բարձրացնելու կը ծառայեն: Ահաւասիկ այս պատճառաւ, և ոչ մէկը իրաւունք ունի, թերթ մը խափանուելէն վերջ, անոր հրատարակիչներուն դէմ գանգատելու. մինչեւ իսկ վճարող բաժանորդները, որովհետեւ լրագրութեան մակաբոյժները քաջախելորդներն իրենք են գլխաւորաբար. եթէ իրենց վաճառած թերթը ձրիաբար կարդալ չի տան, այն ատեն այդ մակաբոյժներու մէջէն անշուշտ պիտի գտնուին այնպիսիներ, որոնք ստիպեալ, վճարումով թերթ կարդան:

Հանրագիտակ կարգացող շատ կայ. Գաւառներէն թէ Պօլսէն մեզ հասած տա-

լաճայիտ թիւնը այս է . և օր ըստ օրէ մեր բաժանորդաց ցանկը ստուարանալն ալ անշուշտ ապացոյց մը կրնայ նկատուիլ առոր . բայց ի՞նչ օգուտ ուր 80% ձրի կը կարգացուի մեր մերթը . Զափազանցութիւն չէ մեր այս ըսածը , այլ նոյն իսկ իրողութիւնը :

Հանրագիտակի հրատարակութեան ձեռնարկած ատենին , ուղեցինք ամեն կերպով օգտակար ըլլալ ժողովուրդին , և զիտնալով որ մեր ժողովուրդը թերութեամբ յարատեւութեան մասին յանիւրաւի կատկած ոտ և թերահաւատ է , զինքը ազահովցնելու համար , փոխանակ տարեկան բաժնեդիրն կանխիկ պահանջելու , եռամսկի զրութիւնը հաստատեցինք , բայց նորէն օգուտ չըբաւ . որովհետեւ մեր բաժանորդներէն շատերը միաքերինն դրած են ձրի Հանրագիտակ կարգալ անպատճառ : Կարգ մը քաղաքավար հրաւերներէ վերջը , ասկէ 15 օր առաջ ալ թերթիս քողքին վրայ 14 բունթ թօխոշոր գրերով , չի վճարող բաժանորդներուն հրաւեր կարգայինք կրկին , և գրեցինք մինչեւ իսկ որ , Հանրագիտակի այդ թիւը ստացող և դրամ չի վճարողներուն այլեւս թերթ չի պիտի դրկենք : Բայց որո՞ւ կ'ըսես , կրկին օգուտ չըբաւ , որովհետեւ անոնցմէ խիստ աննշան մաս մը միայն հաճեցաւ պատասխանել մեր հրաւերին : Եւսկա ապոյցոյց չէ՞ մեր ըսածին : Ինչո՞ւ մեր Պ . Պ . բաժանորդները չեն հաճիր իրենց պարտքը վճարել , և կը պարտաւորեցնեն զմեզ այսպէս հրապարակաւ բողբոքելու :

Փամանակ մը , տեղական թերթ մը սովորութիւն ըրած էր վճարող բաժանորդներու անունները գրել իր թերթին մէջ . հիմա մենք ալ առոր հակառակը պիտի ընենք , այսինքն՝ անոնք որ մեր քերթերը ստացած են և դրամ չեն վճա-

րեր , իրենց անունները պիտի արձանագրենք թերթին մէջ . որ թերեւս ուրիշ թերթեր տեսնելով , զոչանան իրենցմէ , և կամ իրենք ալ զգալով իրենց ընթացքին դէշտ թիւնը , կը ջանան համետ և պատուաւոր դիրք մը բռնել լրագրութեան հանդէպ : Ուստի՝ վերջնականապէս կը հրաւիրենք բոլոր մեր այն բաժանորդները , որոնք իրենց բաժնեդիրն վճարելու դժկամակած են ցարդ , ընդօրինակ զրկել մեզ իրենց պարտքը . ապա թէ ոչ , ինչպէս վերը ըսինք , այս թերթն ալ իրենց զրկելէ վերջ , եթէ բաժնեդիրները չ'ստանանք , թէ թերթ չի պիտի ընդունին , և թէ հրապարակաւ իրենց պարտքը յիշեցնելու պիտի ստիպուինք : Այս առթիւ չենք մոռնար կրկին ըսելու թէ , մենք մեր բաժանորդներէն կանխիկ տարեկան չենք պահանջեր , իրենց դիւրութեամբ համար կրնան 3 ամիսը անգամ մը իրենց եռամսեան զրկել մեզ , որ 13 զրուշ է : Այս ջնջին դամարը կարծեմ ամենուրեք ասկին ալ գիւրամատչելի է , և տակաւին՝ անոնք որ թերթիս յարատեւութեան վրայ կը կասկածին , կըրնան մինչեւ իսկ մէկ ամսուան համար ալ բաժանորդ զրուիլ 5 զրուշի նամակագրոյմ զրկելով մեզ , սոյնմանաւ որ կանխիկ վճարեն . որովհետեւ ասկէ վերջը Հանրագիտակ ապասիկ չի պիտի ծախուի . և ձեռքէ ծախուածներուն գինն ալ մտադիր ենք բարձրացնել , այս վերջիններուն շահը և դրամագլխին մէկ մասը լրագրածախներուն տրուելուն համար :

Եթէ երբէք ժողովուրդը իր պարտքը ճանչնայ , և առանց դժկամակելու և տեսակ տեսակ դժուծ շահախնդրութիւններ նկատողութեան առնելու , մեր իրաւունքը պատշաճօրէն վճարէ , այն ատեն մենք ալ մեր թերթը հետզհետէ աւելի ճոխ պարունակութիւններով օգտակար

ընել պիտի ջանանք, թերթիս հրատա-
րակութեան ձեռնարկած ատեննիս, փա-
փաքեցանք գիտական և արհեստական
յօդուածները պատկերներով դիւրահաս-
կանալի ընել ժողովրդեան. բայց կը
տեսնէք որ, հետզհետէ այդ օգտակար
ձեռնարկը մէկ կողմ ձգել կը պարտա-
ւորինք. որովհետեւ փորագրիչը մեղի պէս
տպրութիւն տալու սովորութիւն չունի. Մենք
նպատակ ունինք նաեւ, թերթը աւելի
ճոխ ներկայացնելու համար, վճարեալ
աշխատակիցներ ունենալ. որոնց իւրա-
քանչիւրը զատ զատ ճիւղեր ստանձնե-
լով, ժողովուրդին առօրեայ պէտքերուն
համապատասխանող գործնական միջոց-
ները ճանչցնեն անոր: Բայց այս ամենը
ժողովուրդին քաջալերութենէն կախումն
ունի. Չըսեմ մակարոյժները, այլ անոնք
որ թերթիս գինը իրենց քսակին նկատ-
մամբ սուղ... կը գտնան, և այդ առար-
կայ թիւնով ճրի թերթ կարգալ կ'ուզեն,
կրնան մէկ քանի հոգի մէկէն մէկ թեր-
թի բաժանորդագրուիլ, որով թէ իրենք
կ'օգտուին, և թէ թերթս ալ շարունակ
օրը օրին վճարուելով, մատակարարու-
թեան մասին դժուարութիւններու չի
բաղխելով կը յարատեւէ, և իր յարա-
տեւութեան մէջ ալ հետզհետէ ժողո-
վուրդին աւելի օգտակար ըլլալ կը ջա-
նայ. Բիպասէք կէօնիւ շէնի յիսէն ի-
շէրի կէշիւ առակին համեմատ, թերթ
մը երբ օրինաւորապէս կը վճարուի, և
ընթերցող հասարակութենէն նիւթապէս
թէ բարոյապէս կը քաջալերուի, այն թեր-
թը միշտ համով հոտով կը գրէ, և կը
ջանայ միշտ իր ընթերցողաց օգտակար
ըլլալ. Ապացոյց չէ՞ միթէ այս ըսածիս,
մեր թերթին հարց-պատասխանի գրու-
թիւնը. որուն նմանը տակաւին տես-
նումս չէր մեր տեղական թերթերու
մէջ. ուրկէ սակայն շատ քիչեր օգտուիլ

կը փորձեն. Անշուշտ մեր այս գրութիւ-
նը զմեզ շատ հեռուները պիտի տանէր,
բայց ընթերցողաց օգտակար ըլլալու
նպատակաւ, և շարունակ այժմէս թիւ-
նով դրադած ըլլալու դիտաւորութիւնով,
ամեն տեսակ զոհողութիւններ յանձն
առնել որոշած էինք հաճութեամբ. Մենք
ամենագէտ ըլլալու յաւակնութիւնը չու-
նինք, բայց ինչպէս Հանրագիտակի ա-
ռաջին թւոյն մէջ ալ խօսած ենք, հե-
տեւելով միշտ Եւրոպական լուրջ հեղի-
նակութեանց և հանգէսներու, մեր թեր-
թի մասնագէտ աշխատակիցներու հետ
մէկտեղ, ըստ կարելոյն գոհացում տալ
պիտի ջանանք ժողովուրդի այն հարցե-
րուն, որոնք մեր թերթի սահմաններուն
մէջ կը գտնուին:

Ասկէ վատ՝ որոշած ենք առանին արն-
տեսականներու բաժինն՝ ալ աւելի ճա-
խացնել, տնական պիտոյքներու, կարի,
ձեւի, ձեռագործներու, եւայլն, եւայլն,
վրայ եւս խօսելով, աւելցնել գրական,
բանասիրական մաս մ'եւս, ինչպէս և
գրօսեցուցիչ և հրահանգիչ վէպեր, նկար
հանելուկներ, դիտական օգտակար հար-
ցեր, եւայլն, եւայլն. որոց ամենուն ալ
տեղ տալու համար թերթին ծաւալը
մեծցնել, և այսպէսով Հայ ժողովուրդին
ներկայացնել շաբաթաթերթ մը, որուն
մէջ ամեն ոք իր ճաշակին համապատաս-
խան օգտակար գրութիւններ գտնայ:
Բայց ինչպէս ըսինք, այս ամենը ընթեր-
ցող հասարակութեան մատուցանելիք
քաջալերութենէն կախումն ունի. եւ այս-
պիսի թերթի մը գոյութիւնը պահպա-
նել իր պարտքն է. Ամեն բաժանորդ իր
բաժնեգինը կանխիկ վճարելէ զատ, թեր-
թին յառաջդիմութեան նպաստելու հա-
մար, պէտք է իր բարեկամաց ալ յանձ-
նարարել վայն, և զգացնել մակարոյժ-
ներու ալ թէ, ճրի թերթ կարգալը հան-

րային շահուն վնասել ըսել է:

Սրդ՝ ամեն անոնք որ Հանրագիտակը մշտապես ընել կը փափաքին, գիտնալով որ մեր ժողովուրդը գիտութեան և արհեստի զգալի պէտքն ունի, կրնան նուիրել գաւառական դպրոցներուն ուրբեմնքերու: Այս կէտին վրայ կը ծանրանալ, և մասնաւորապէս մեր հարուստ և բարեսէր դասակարգի ուշադրութեան կը յանձնենք. գիտնալով որ, իրենք ամեն կերպ դիւրութիւններ ունենալով, իրենց մտային զարգացման համար Եւրոպական դիտական թերթերէ և գրքերէ ճոխ անուններ կրնան քաղել, և հետեւաբար Հանրագիտակի պէտքն չեն զգար. բայց որպէսզի ժողովուրդի մտային զարգացման ծառայող և ամեն կերպով անոր տնտեսական վիճակի մակարդակը բարձրացնելու նպատակ ունեցող այս օգտակար թերթը տարածուի ժողովուրդի ամեն խաւերուն մէջ, պէտք է որ իրենք ալ անմասն չի գտնուին:

Վերջապէս, անոնք որ Հանրագիտակի կարեւորութիւնը զգացած են, և չեն կրնար նիւթապէս և բարոյապէս օժանդակել, թերթի Վարչութիւնը անոնց տրամադրութեան տակ կը դնէ ճշիւբարձր մէկ օրինակ Հանրագիտակ, որպէս զի զայն իրենց բարեկամաց յանձնարարելով, գոնէ 10 նոր բաժանորդներ զըտնան. որով թէ իրենք կ'օգտուին, և թէ թերթի մատակարարութիւնն ալ իւր հաւասարակշռութիւնը կը պահէ. և վըստահ եղիք որ, այս կերպով Հանրագիտակ պիտի յարատեւէ աննկուն, միշտ ժողովուրդին օգտակար ըլլալու նպատակով:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Ա.

Բոլոր վէպերը իբր նիւթ կ'ունենան սէրը: Ինչո՞ւ համար բարեկամութեան վրայ չի գրուիր:

Իրօք, մեծ տարբերութիւն չկայ երկու զգացումներու մէջ. բարեկամութեան յաջորդող ատելութիւնն ա՛յնքան հրաքորք է, որքան սիրոյ յաջորդող ատելութիւնը:

Մինչեւ որ գրեմ վէպ մը՝ բարեկամութեան վրայ, եւ անպատճառ պիտի գրեմ, կուզեմ ընել բարեկամներու պատմութիւն մը, որուն երկու հերոսներն ալ կը ճանչնամ, եւ որ ցոյց կուտայ թէ՛ նոյն իսկ այս ժամանակին կը գտնուին տակաւին մարդիկ, որ կարող են ազնուանալ ու համեստանալ զոհողութիւն ընելով, եւ հպարտանալ՝ բարիք ընելով:

Ալպէսդ Սէնդ-Լիէ եւ Լուդովիկոս Ֆոլտրօն՝ Բ... Գօլէնի ընկերներէս էին, զանոնք կը յիշատակէինք իրենց յարատեւ հակառակութեան համար, որ ո՛չ միայն կը յայտնուէր դասարանին մէջ լաւ պարտականութիւններ կատարելու դիտումով, այլ նաեւ զբօսանքի ատեն՝ կուռիի հարուածներով: Ամէն մէկ շարադրութիւն բանակուի առիթ մըն էր: Միայն թէ զանոնք չէինք հռչակեր իրեւ առաջին հաւասարապատիւներ (եֆսեֆուս), երկրորդը միշտ կը զրդէր առաջինը, այնպէս որ, շարադրութեան մէջ առաջադէմները, իրենց զբօսանքի խաղի ժամերուն, կը ջանային ցոյց տալ թէ՛ կռիւամարտութեան մէջ ալ զօրաւոր էին:

Իրենց երկրորդ տարին, իրարու դէմք կը ճանկատէին: Երրորդ տարին, երկուքն ալ վաճառեցան գօլէճէն իրենց համալսարանական արժանիքին հակառակ. վասն զի օր մը երկուքին թաշկինակին մէջ ալ կարուած զրտանք քարեր, զոր անմիջապէս պիտի գործածէին իրարու կռնակի զարնելու եւ թոքախտաւոր ըլլալու համար ի հարկէ: Հռետորական արուեստի մէջ, զիրար թեւադրեցին տեղի ընելով՝ սիրուն ծխաւաճառուհի մը զրկուած ծաղկեփունջերու առիթով, սակայն տեղի չունեցաւ զինագործին ճարտարութեամբը, որուն դիմած էին զէնք

գնեւու համար, սա՛, բանը իմացուց ընտանիքին եւ ոստիկանութեան:

Փիլիսոփայութեան մէջ, ըստ բաւականի տէր եղած էին իրենց անձին՝ անէծքի, արհամարհանքի, մակդիրներու (ապշած, խնիթ եւայլն), եւ ծաղրող ժպիտներու պայքարով մը գոհանալու համար:

Իրր պոսակաւոր ընդունուելու համար, Փարիզ մեկնելուն նախընթաց օրը, Լուդովիկոս Ֆոռժըռօն հիւանդացու, Սլաւէռդ Սէնդ-Լիէ յայտարարեց որ մինակ չպիտի մեկնէր. կուզէր յաղթանակել զէ՛մ առ զէ՛մ իր նախանձորդին, եւ հակառակ իր արհամարհանքին, օրը երկու անգամ իր ընկերին առաջնութեան մասին անգլեկութիւն տունել կ'երթար:

Անգամ մը, իրեն ըսին թէ՛ բժիշկը շատ անհանդիստ էր, թէ՛ Լուդովիկոս Ֆոռժըռօն չկրնար այս գիշեր անցնել: Այս գուժին վերայ զգաց ներքնովի այնքան սոսկալի բաղժում մը, որ սկսաւ հեծեծել բարձրաձայն: Ա՛լ հասկցաւ թէ՛ իր նախանձութիւնն էր որ զինքը կը յուսահատեցնէր, մօտերս կորսնցնելու վտիտով, հակառակութեան եւ յաղթանակի առիթ մը. եւ բաղժալով հասնիլ մինչեւ իր վայրագութեան ծայրը, թոյլտուութիւն խնդրեց որ այս վճռական գիշերը հիւանդին սենեակն անցնէ:

Շնորհուեցաւ:

Լուդովիկոս կը զառանցէր. Սլաւէռդ հիւանդին զլսուէն վերելը նստած, իրեն յանձնուած բոլոր խնամքները ճշգրտութեամբ ու խղճահար կը կատարէր. կուլար առանց գիտնալու, մահուան զէ՛մ կը կատարէր, եւ ամեն մէկ վարկեան կը ծնրադրէր անկողնին առջեւ, նախանձորդին խիստ տաք ձեռքը կը բռնէր, դայն կը համբարէր, իրր թէ՛ կուզէր աւելի սյրել, որպէս զի զանի չտաղեցնէ, ամեն վարկեան կցկատար աղօթքներ ու աղաչանքներ միմնչելով: Աւտըւան զէ՛մ, ճգնաժամը հանդարտեցաւ, զառանցանքը դադարեցաւ եւ թեթեւ թմրութենէ մը ետք, Լուդովիկոս ընդոտտ անթնցաւ՝ կոչելով:

— Սլաւէռդ, Սլաւէռդ:

— Հա՛ն եմ, ըսաւ անձկութեամբ մը:

— Շնորհակա՛լ եմ, պատասխանեց Լուդովիկոս գոհ սրտով:

Երբ բժիշկը եկաւ, յայտարարեց թէ՛ հի-

ւանդը փրկուած էր, Լուդովիկոսի ծնողքը գոչեցին իսկոյն,

— Իր բարեկամը հեռացուց հիւանդութիւնը, ի գուժ չարժեղով մահը. իր բարեկա՛մը... Սլաւէռդ Սէնդ-Լիէն գրկեցին հայրն ու մայրը՝ որ զինք կ'օրհնէին այս սուրբ (saint-Սէնդ) անունով. նա իր կարգին շատ դժգոյն եւ արտասուաթոր, ծռելով հիւանդին վրայ, որուն տենջալի ակնարկը զինքը կը քաշէր, տուաւ անոր համբոյրներ իր ընդունածներուն փոխադարձ, եւ քառորդ ժամ մը անոր գրկին մէջ սրկուած մնաց:

Բ.

Երբ միասին Փարիզ մեկնեցան, կը ծիծաղէին հին ատենութեան վրայ, որ իրենց յոյժ նման երկու անգլիտակից արտերու խմորումն էր, եւ ասի կուտար ոյժի ա՛յն փոխարինութիւնը, որ շատ մը բարեկամներ զիրար կը քաշէ:

Միեւնոյն յաջողութեամբ պոսակաւոր ընդունուեցան, եւ ոչնուհետեւ սերտ միացան իրարու, վստահութիւն ու եռանդ ներշնչելով: Զիրար կը ճանչնային այնքան աղէկ որ, իրենց նկարագրին մէջ թագուն բան մը չի կար: Ջնջած էին նախանձութեան պատճառները:

Երկուքն ալ հարուստ էին, Լուդովիկոս Ֆոռժըռօն սեղանաւորի մը որդի, իսկ Սլաւէռդ Սէնդ-Լիէ մեծ կալուածատէր ատենակալի մը որդի, չունէին փառասիրութեան ո՛րեւէ մարմաջ, եւ իրարու կ'ըսէին ժպտաղէ՛մ թէ՛ պիտի որոշէին իրենց ասպարէզը ընտրելու կամ բնաւ չընտրելու ժամանակը:

Հիմակու հիմայ, զիրար կը սիրէին համարձակ, եւ զիրար սիրելը լաւ կը դռնէին. իրենց սերտ բարեկամութիւնը, առանց անոնց սէր երաշխատրելու, կ'երաշխատրէր սիրոյ աւելցած մասը. եւ ա՛յն թեթեւ կապերը՝ որոնցմով կը պոսակաւորողէին ժամանակի մը համար, իրենց եղբայրական շղթային իրրեւ մէկ զարդն էին:

Լուդովիկոս Ֆոռժըռօն ուսման ճաշակն ունէր, եւ մանաւանդ ինքնագրութեանց հաւաքոյթներու: Սլաւէռդ Սէնդ-Լիէ բանաստեղծ էր ուղած ատեն, բայց աւելի խանդ ունէր ուրիշներու բանաստեղծութեան, քան իրենին համար. եւ քիչ կը գրէր ինք:

Իրարմէ բան մը չէին ծածկէր, բայց ա-

մեն բան իրարու չէին ըսեր: Ճամարիտ բա-
րեկամներ կ'ապրին իրարու մեջ, ամեն դուռ
բաց է իրենց համար, եւ պէտք չունին վո-
խադարձաբար իրարու շնայելու իրենց գիտ-
ցած պատիւները: Իրարու միտք կը հասկը-
նան, բայց մտերմութիւններ չեն թելադրեր,
եւ չեն ընել: Նոյն իսկ ինչ ինչ գաղտնիքներ
իրարմէ պահելու նազանքն ու պատկառանքն
ունին:

Գ.

Ահա՛ ինչո՞ւ համար Լուդովիկոս նախ եւ
առաջ չյայտնեց իր Ալպէսէ լաբեկամին այն
գործվալի տալաւորութիւնը՝ զոր գործած էր
իր վրայ իրենց երկրի մէկ դեռատի աղջիկը:
Երբ հասկցաւ թէ՛ այս տալաւորութիւնը սէր
դարձած էր, առաջին անգամ անոր վրայ
խօսելու վախն ունեցաւ: Ալպէսէ ո'րչափ պի-
տի վրդովուէր իր բերեկամին սրտին վրայ
ըրած այդ ոտնձգութենէն:

Սակայն, երբոր Լուդովիկոս վերահասու
եղաւ թէ ճշմարտապէս կը սիրուի, եւ երբ
ընդհանրեց հեռուէն ամուսնութիւնը, չվա-
րանեցաւ:

Ալպէսէ արագ տփփութիւն մը ունեցաւ
այս կրկնակ սէրը կուահելով:

— Պիտի տարակուսէի՛, ըսաւ քիչ մը ա-
կամայ ժպիտով մը. երջանիկ եղիր:

— Դուն ալ ինծի պէս ըրէ՛, յարեց իր բա-
րեկամը, ամուսնացիր:

— Կը վախճամ որ կոչում չունիմ, եւ ոչ
ոք կ'ըսէ ինծի թէ ամուսնութեան յար-
մար ես:

Յայտնի եղաւ որ բան մը, ամալ մը, հով
մը սահած էր այն երկու ա՛յնքան սեփքա-
կի կապուած սրտերուն մէջէն:

Լուդովիկոս կրցածը ըրաւ գաղտնի վայե-
լելու համար իր երջանկութիւնը, իր յոյսե-
րը, բայց ի զո՛ւր. խոհականորէն կը գուշա-
կէր՝ առ ի գզուշութիւն իր բարեկամին՝ թէ
ասի, անկարող ամուսնանալու, պիտի նեղ-
ուէր այդ ամուսնութենէն, զայն չէր պար-
սաւէր, չէր ալ արհամարհեր, միջոց մը չէր
խորհէր զայն արգիլելու համար, բայց կը
սպասէր բարեկամին ամուսնութեան, որպէս
զի մեկնի ինք:

Իրաւցնէ, նոյն իսկ հարսանեկան հանդէ-
սին օրը՝ որուն մէջ պաշտօնական դեր մը

ունեցաւ, Ալպէսէ մնա՛ք բառովը կոխեց բա-
ւական զուարթօրէն, չտալու համար ո՛րեւ
խղճի խայթ նորապսակ ամուսիններուն, բա-
ւական լրջութեամբ, որպէս զի երկուքն ալ
հասկնային թէ զինքը պիտի վիրաւորէին,
երբ ճիշդ մը ընէին զանի վար զնելու:

Պիտի վերադառնար, չվերադառնաւ, այլ
կը գրէր: Իր առաջին թղթակցութիւնները
տաք եւ եռանդոտ եղան: Որովհետեւ Լու-
դովիկոս բաւական կը համարէր ըսկ բարե-
կամական պօնժողո (բարի ը՛յս) մը զրկել
իր կնոջ կողմէն, եւ կը վախճար շատ առաջ
երթալ: Ալպէսէ կը դանդաւոր որ չունէր
ճշգրիտ նկարը ա՛յն երջանկութեան, զոր կը
մտղթէր իր բարեկամին. նոյն իսկ քիչ մը
հեռուն գնաց իր հետաքրքրութեան մէջ,
յետոյ իր նամակները քիչցան, վեց ամսուան
լուսթինէ մը ետք, Լուդովիկոս երեկոյ մը
իր կինը գրկելով ըսաւ.

— Լինցա՛ւ, Ալպէսէ այլեւս չպիտի 'գրէ՛.
ո՛հ, եթէ կարենար գտնել քեզի պէս կին
մը, ի՛նչպէս մեզի պիտի վերադառնար:

— Կը գտնէ, քթին տակէն ըսաւ Տիկին
Ֆուֆլոսին, ըրած մեծարանքէն քիչ մը չիտ-
թած:

Այն ատեն Լուդովիկոս, բարեկամութեան
վրայ ընտիր խորհրդածութիւններ ըրաւ:

Իրենը պահեց այն վախով թէ՛ իր երջան-
կութիւնը պիտի խռովէր, բայց մեղամաղձու-
թեան վարկեաններուն, որ հարկաւոր հան-
գիստներն են տոկուն եւ յարատեւ երջան-
կութեան մը, կը մտածէր իր սիրեցեալ թա-
վառիկին, եւ կը ցաւէր յուսախաբութեան
վրայ, զոր անոր պատճառած էր խզուած
բարեկամութիւնը, ա՛յնքան՝ որքան կը ցաւէր
անոր բացակայութեան վրայ:

Լուր առաւ թէ Ալպէսէ խաղացող եղած
էր, թէ կ'երթար ամարանոցէ ամարանոց իր
հարստութիւնը վատնելով, իր անկին հօրը
մահը՝ զինք անոր ինչքին տէրն ըրած ըլլա-
լով, ծննդավայրին մարդիկը գայթակեցուց
այն չնչիւնով, զոր կը հանէին, մաս առ մաս,
կալուածները, արտերը, մարդերը, եւայլն
ծախելու պաշտօն ունեցող գրագիրները:

— Երբ բացը ելլէ, թէ յիշէ՛ զիս, կ'ըսէր
Լուդովիկոս:

(Շարունակելի)

Թարգմ. Դադիկեհե

ՄԻՅՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՃԱՆՃ

(Շար. եւ վերջ թիւ 18)

Դիակիեր ճանն (*musca vomitaria*) եւ մսա-
ճանն *musca* կամ *sarcophaga carnaria*) -
Ասանց երկուքն ալ քիչ շատ իրարու կը նը-
մանին. առաջինը միշտ (խոյն) կապոյտ եւ
փայլուն մարմին մ'ունի պողպատի գոյնով,
որ սեւ գոյնով շեղակի գծեր կը գտնուին
վրան: Խոշոր ճանճեր են, որոնք շատ ան-
գամներ բաց պատուհաններէն ներս մտնե-
լով, ապակիներուն կամ ուրիշ առարկանե-
րուն կը զարնուին ու ժգնապէս: Այս ճան-
ճին է գը՝ իր հաւկիթները կ'ածէ աւելի դի-
ակներու եւ մարդոց, անասնոց թարախալիք
վէրքերուն մէջ. հաւկիթները իսկոյն կը ճա-
թին եւ սրդերը երեւան կ'ուզան, որոնք
այն աստիճան շատ կ'ուտեն որ, 2½ փամ-
ուան մէջ իրենց նախնական ծանրութեան
100 անգամէն աւելի կը կշռեն. 4-5 օրուան
մէջ չափահաս կ'ըլլան եւ 8-13 հազ. մեթր
(միլի մետր) երկայնութիւն կ'ունենան. այն
ատեն հողին տակը կ'երթան, ուր կծիծի կը
վերածուին, եւ 10-12 օրուան մէջ ճանճ
կ'ըլլան. որոնք անմիջապէս հաւկիթ կ'ածեն
անհամար քանակութիւնով, այնպէս որ, մէկ
ճանճը մօտաւորապէս 200 հաւկիթ կ'ածէ,
եթէ պարապ փամանակ ունիք, հաշուեցէք
թէ 10 ճանճը ամբողջ ամբան եղանակին մէջ
քանի՞ միլիառ կ'ըլլան:

Իսկ երկրորդը՝ որուն Մսաճանճ ըսինք,
վերինէն շատ չի տարբերիր: Կը նախնորէ
աւելի խոհանոցները եւ մատանները, ինչպէս
եւ մսավաճառներուն խանութները: Ամառը,
երբ անխոհեմութեամբ մսի կտոր մը, հում
կամ եփած, բացը թողուք, իսկոյն վրան
կը յարձակի, եւ ակնթարթի մը մէջ իր
հաւկիթները կը զետեղէ անոր վրայ: Իւրա-
քանչիւր էգ, միւսին պէս 200 ի չափ հաւ-
կիթներ կ'ածէ. 20 ական հատ տեղ տեղ,
որոնք իսկոյն ճաթելով սրդերը երեւան կ'ե-
լան: Այս վերջինները տեսակ մը հեղուկ
կ'արտադրեն, որուն շնորհիւ միւսը իսկոյն
կ'արուելի, կը հոտի եւ բազալուծուելով իրենց
յարմարագոյն սնունդ մը կը կազմէ: Կան

ուրիշ մեծ ու փոքր կարգ մը ճանճեր ալ, ո-
րոնք սովոր են իրենց հաւկիթները մեր սը-
նունդներուն մէջ ածել, ահա այս պատճա-
ռաւ պէտք է մետաղաւորայնէ (թէջ գափէս)
կերակրադարաններու մէջ պահել մեր ու-
տեսունները:

Երոպայի շատ մը մսավաճառներ հետեւ-
եալ միջոցը կը գործածեն իրենց վաճառա-
նոցները ճանճերէ ազատ պահելու համար:
Պնակի մը մէջ լեարդի (գարա ճիւղեր) կտոր
մը կը դնեն, պիծակները շատ կ'ախորժին
անկէ, եւ իսկոյն գլուխը հաւաքուելով պատ-
ուական ճաշ մը կ'ընեն. կշտանալէն վերջ,
խանութին մէջ տեղ տեղ դարանակալ կը կե-
նան. նոյն միջոցին եթէ ճանճ մը համարձա-
կի խանութէն ներս մտնալ, իսկոյն վրան կը
յարձակին եւ կը հալածեն զայն: Ուրիշներ կը
գործածեն վերը յիշուած միջոցներէն մին, եւ
աւելի դառնահամ կասիայի խաշածոն. կայ
նաեւ ճանճահալած ուրիշ դեղ մ'ալ, որուն
պատրաստութիւնը հետեւեալն է. շատեր
կը գործածեն եւ իբր ալգու միջոց ալ կը
յանձնարարեն:

Մէկ քաշ խոզի կամ դմակիւղի մէջ տաք-
ցնելով եռացնելու է մէկ քանի վայրկեան-
ներ 2 լեցուն ափ դափնիի տերեւներ. պո-
ղեղն վերջը կը քսեն դռներուն պատերուն
եւ այլն վրայ տեղ տեղ. հոտէն ճանճերը կը
փախին. եւ կամ եթէ չ'ուզեն դռները,
պատերը խզաւորել, թուղթի կամ լաթի կը-
տորներու վրայ քսելով տեղ տեղ կը կախն.
Բայց ամեն օր պէտք է գործողութիւնը
կրկնել:

Որովհետեւ ճանճերու վրայ խօսեցանք, չի
մոռնանք երկրագործներուն ալ օգտակար
բաժին մը հանել անցողակի:

Դաշտերը, մարգագետինները եւ լեռնա-
ցին ճամբաներու վրայ, ամառը ճիւղ այս
միջոցներուն ընդհանրապէս, երբ օդը տաք
հեղցոցիչ է, ճամբորդները եւ չորքոտանի-
ները չափազանց կը նեղուին կարգ մը խոշոր
ճանճերէ, որոնց սովորաբար գորեխ (*taon*)
անունը կ'ուտան:

Այս ճանճը դաւառացիներուն ծանօթ է,
որ ունի թխազոյն մարմին մը, սեւ բող-
կուկներ, թախ թեւերուն վրայ դեղնազոյն
գծեր, դեղին ոտքեր. որովայնը կազմուած է
տափակ օղակներով, որոնց վրայ կը դառնուի

դեղնագույն բիծեր, ունի՝ խոշոր, փայլուն եւ կոնսչ աչքեր: Արուն՝ ծաղիկներու հիւթերով կ'ապրի. իսկ էգը՝ արջառներու, ձիերու եւ այլն արիւնը ծծելով, եւ մինչեւ իսկ մարդկանց. 3-400 հաւկիթ կ'ածէ խոտերու վրայ, որ 10-12 օրէն բացուելով թրթուրները երեւան կուգան: Ասոնք կենդանութիւն առնելուն պէս՝ հողին տակը կը թաղուին, եւ ամբողջ ձմեռը այսպէս կ'անցունեն. մայիսին կծիծի կը փոխուին, եւ յունիս ամսոյ մէջ ալ ճանճի. որ ատեն թռչտելով թէ իրենց չահատակութիւնը ի գործ կը դնեն, եւ թէ միեւնոյն անգամ հաւկիթ կ'ածեն: Զիւար ճամբարդները կամ կառասպանները, ինչպէս եւ երկրագործները երբ իրենց կենդանիները արտ կը տանին աշխատելու, առաջուց կը քսեն անոնց վրայ վերը բացատրուած դափնիի սպեղանին, որուն հոտէն ճանճերը չի մօտենալով, անասունները հանդարտօրէն կ'աշխատին: Կը գործածեն նաեւ ումանք, ընկուզի տերեւի խաշածոն, զոր կը քսեն մերթ ընդ մերթ անասնոց մարմնոյն վրայ:

Եզան մորթակեւ կամ ենթամորթի ճանճը (hypoderma bovis) որ գործէն քիչ փոքր կ'ըլլայ. իրանը առջեւի կողմէն դեղնագույն է, մէջ տեղը սեւ, եւ կը շարունակուի 4 երկայն սեւ գծերով. որովայնը թխագույն է. ամբողջ մարմինը աղուամազոտ, թեւերը աղուոտ գոյնով, ոտքերը դեղնագույն կարմրութեամբ: Այս խոշոր ճանճը կը գտնուի ընդհանրապէս արօտատեղիները յունիսէն մինչեւ սեպտեմբեր. իւր հաւկիթները կ'ածէ արջառներու (կով, եզ, գոմէշ) կունակի մաշկերուն մէջ, ուր կենդանիները չեն կարող հասնիլ ոչ լեզուով եւ ոչ ալ պոչով, զանոնք վնասելու համար: Քիչ օրէն հաւկիթը կը կը ճաթի, թրթուրը երեւան կ'ուգայ, որ իր գորաւոր ծնօտներով կը ծակէ մորթը եւ ներս կը մտնայ. քիչ օրէն ուռէցք մը կը գոյանայ, որ հետզհետէ թարախով կը լեցնայ, որուն մէջտեղը 10-11 ամիս թրթուրը կ'ապրի կենդանիին մարմինէն զոյացած թարախը ծծելով: Վերջին օրերը մորթը կակուղնալով կը պատուի, թրթուրը դուրս կ'ելլէ, դետին կ'իյնայ, կծիծի կը փոխուի, ուրկէ 5-6 շաբաթ յետոյ ճանճի այլափոխուելով կը թռչտի եւ հաւկիթ կ'ածէ: Շատ եզերու մորթին

վրայ մինչեւ 30-40 ուռէցք կը հաշուի, եւ երբ այս անասունները մորթուին, այս պատճառաւ մորթերին տկարացած ըլլալով, շատ աժան կը ծախուի:

Արջառները երբ այդ ենթամորթին բզկալը լսեն, շատ կը վախնան. եւ ուր որ ալ ըլլան, կ'սկսին խելագարի մը պէս պոչերէն վեր տնկելով պնդեցող վազել. եւ երբ ջուր մը գտնեն, մէջը կը նետուին այդ փորձանքէն ազատելու համար:

Ասոր մօտ ուրիշ տեսակ մ'ալ կայ, որ ան ալ ձիու ենթամորթի կը կոչուի, եւ իր թրթուրը կ'ապրի ձիերու պարանոցին, կրունակին եւ երկամանց մորթերուն մէջ:

Ձիերու ստամոքսակեաց ճանճը (œtre du cheval, gastrophilus equi), 15-17 հազ. մեթր երկայն, գլխը եւ կուրծքը թուի դեղնագույն աղուամազերով ծածկուած, փորը եւ ոտքերը դեղին մեղրամանի գոյնով: Էգը 700 ի չափ հաւկիթներ կ'ածէ, ճերմակ եւ հազիւ 1 հազ. մեթր երկայն. եւ կը պետեղէ զանոնք ձիերու, էջերու եւ ջորիններու մազերու մէջտեղումները: Թրթուրը մորթին վրայ սողսկելով, եւ մերթ ընդ մերթ խաժատելով կը խողտցնէ կենդանին, եւ կը փորձուի խողտած տեղը լցնել, եւ նոյն միջոցին թրթուրը լեզուին վրայ առնելով բերանը կը տանի որ անտի կ'իջնէ ստամոքսին մէջ, որու ներքին թաղանթին հաստատուելով շարունակ կը ծծէ ստամոքսային հիւթը: Շատ անգամներ պատահած է որ ստամոքսը ծակած են, եւ կենդանիին ալ մահուան պատճառ եղած: Տասնէն 15 ամիս կ'ապրի պատճառ եղած: Տասնէն 15 ամիս կ'ապրի այսպէս թրթուրը. եւ երբ այլափոխուելու ժամանակը հասնի, կը զատուի, ստամոքսին մէջ կ'իյնայ, եւ կ'ըկղանաց հետ դուրս կ'ելլայ: Այս միջոցին թրթուրը վարդագույն ըլլալով, հողը կը մտնէ, կծիծի կը փոխուի, եւ 6 շաբաթ յետոյ կատարեալ ճանճ ըլլալով դուրս կ'ելլայ:

Ասոր շատ մօտ ուրիշ տեսակ մ'ալ կայ, որ միեւնոյն եղանակով կ'ապրի. քիչ մ'աւելի փոքր եւ կուրծքը գորշագույն, փորը սեւ եւ աղուամազոտ, իր հաւկիթները կ'ածէ ձիուն շրթունքներուն վրայ. որոնք սեւագոյն եւ կոնածեւ են: Թրթուրը ի սկզբուն կարմրագույն կ'ըլլայ եւ յետոյ կոնաչի կը փոխուի, եւ վերինին պէս ստամոքսին մէջ

կ'ապրի, բայց դուրս ելած ատեն, ժամանակ մը արևանին եզերքները փակած կ'ապրի, որ շատ անգամներ այնպիսի սաստիկ կերպով կը խողտացնէ ձին, որ գրգռելով կը կատողի եւ երբեմն փախելով մեծ վտանգներ յառաջ կը բերէ։ Այս պարագային մէջ, որովհետեւ ձին անկարող է զանոնք մաքրել, պէտք է ձեռքով քաշել հանել։ Բայց եթէ առաջուց վերը յիշուած դեղերէն մին գործածուի, յարդէն ճանճերը չի կրնալով մոտենալ ձիուն, այս վերջինը զերծ կը մնայ անոնց թրթուրներէն։

Ոչխարներու ռնգակեաց նախնը, ունի թըխագոյն կուրծք մը սեւ բիծերով պիտակուած, փորը մարմարիոնի պէս դեղին, ճերմակ եւ սեւ գոյներով երանգուած է եւ ծածկուած ազուամապերով։ Թեւերը թափանցիկ են։ Երկայնութիւնը 10—12 հազ. մեթր է։ Այս ճանճը իր հակիթները կ'ածէ ոչխարներու քթին եզերքները։ Որոնցմէ ելած թրթուրները քթէն ներս մտնելով մինչեւ վեր կ'ելեն, հոն կ'ապրին այսպէս մինչեւ 9 ամիս ոչխարին խլինքը ծծելով, որ այս պատճառաւ խլինքի արտադրութիւնն ալ կը շատնայ, եւ շարունակ կենդանիին քիթը կը վազէ։ Երբ կծիծի փոխուելու ժամանակը հասնի, փակած տեղէն կը զատուի, եւ քթին մէջ շարժելով խողտում մը յառաջ կը բերէ, որով եւ ոչխարը փոնգտալով դուրս կը նետէ զայն, որ երբ գետինը խնայ, հողը կը մտնայ, կծիծի կը փոխուի, եւ 2 ամիս յետոյ կատարեալ ճանճ ըլլալով դուրս կ'ելայ։

Ռնգակեաց ճանճի թրթուրները եթէ քիչ քանակութեամբ գտնուին քթին մէջ, զգալի վտանք մը յառաջ չեն բերեր կենդանիին համար, առաւաւելն ռնգածորէ կը բռնուի։ Բայց եթէ անոնք շատ ըլլան, այն ատեն գարունին կամ ամառն մէջ, քթին ներքին թաղանթին վրայ գրգռումներ յառաջ կը բերեն։ Եւ շատ անգամ ոչխարը կը մեռնեն, որոն աստանիչերը հետեւեալներն են։ Դրդուումը թեթեւ ըլլալով, ոչխարը շարունակ կը փոնգտայ, քիթը կը վազէ։ Ղըլուխը կամ քիթը կարծր առարկաներու վրայ կը շփէ։ առջեւի կամ ետեւի ոտքը դէպ ի զուխը կ'երկարէ, իւր թէ քերել ուզէր։ մերթ Ընդ մերթ զուխը ուժղնութեամբ կը

շարժէ։ ուժով մը դէպ ի ետեւ կը նետէ եւ քիթը կծկելով պահ մը կը կենայ այնպէս։ Երբ գրգռումը շատ է, այն ատեն ժամանակ մը կենդանին զլուխը կը կախէ, մերթ Ընդ մերթ գետինը կը դպցնէ։ եւ այնպէս կը կենայ։ Երբ ժամանակը կը զոցուի եւ զլուխը արութեան աստանիչերը կը ցուցնէ։ Արագօրէն կ'սկսի նիհարնալ, ախաները կը կճրտացնէ, աչքերը կը շմուրին, եւ 4 օրէն, առաւաւելն՝ 8 օրէն կը մեռնի։

Ասոր առաջըր առնելու համար, պէտք է ամառը ճանճերը երեցած ատեն, ոչխարներուն քթին բաւորաբար կարագ, խոզի ճարպ, կամ դմակ իւղ քսել, եթէ ճանճերու համար յանձնարարուած դափնիի սպեղանիէն քսուի, աւելի ազդու կ'ըլլայ, որուն հետէն ճանճերը չի կրնալով մոտենալ, հաւկիթնին ալ անոնք քթին բաւորաբար չեն ածեր։ Դժուար է այս միջոցը թէեւ ստուար քանակութեամբ հօտ ունեցողներու համար, բայց ինչ օգուտ որ ուրիշ միջոց չի կայ, Հիւանդութեան աստանիչերը երեցած պահուն կը յանձնարարեն հետեւեալ բաղադրութիւնը։

Երկբորուի սնդիկի (սֆսիւլիւմեն, sublimé corrosif) 30 հար. կում (սանքիկում) 1 լիթրա ջուրի մէջ լուծելով, ոչխարին քթին մէջ մաս մը անկէ գրկուել (չիւրկիւ)։ Բայց դժբաղդարար թրթուրին զլուխը քթի թաղանթին մէջ ըլլալուն, շատ անգամ 80% ազդեցութիւն չունենար։

Վերջացնելէ առաջ խօսինք նաեւ ձիերու Սարգանաններու (hippobosca equi) վրայ, զոր ամենքդ ալ տեսած ըլլալու էք։ ճերմակ բիծերով խառն թխագոյն իրան մ'ունին, փորերնին գորշ մոխրագոյն, որ սովորական ճանճերէն կը տարբերին իրենց մարմնայն տափակ ձեւով։ Արագաշարժ են եւ շատ զգուարութեամբ կը բռնուին։ մարմիննին կարծր է, եւ կենդանեաց վրայ պատած ատեննին գէշ կերպով կը խողտեցնեն զանոնք։ Եւ կ'ապրին անոնց արիւնը ծծելով։

Սարգանանները քանի մը տեսակ են եւ կը գտնուին ոչ միայն ձիերու, այլ եւ եղեւրու, չուներու եւն։ վրայ ալ։ շատ անգամ մարդոց վրայ ալ կը յարձակին եւ ակունջին մէջ կը մտնան, ուրկէ դժուարութեամբ դուրս կ'ելլեն։ Այս զաղիւր միջատը կ'ապրի Ընդ-

հանրապէս ձերբու. պոչին տակ, որունքնե-
րուն մէջ եւայլն: Երբեմն ա՛յնչափ բազմա-
թեամբ կը գտնուին որ, խեղճ կենդանին շա-
րունակ անհանդիստ կ'ընեն: Ասոնք հաւկիթ
չեն ածեր. այլ ողջ թշնամիներ կը լերեն.
որոնք գուրս ելլելուն պէս կծիծի կը փոխ-
ուին եւ յետոյ ճանճ կըլլան:

Պէտք է ձերբու յետոյքը միշտ մաքուր
պահել, եւ վերը ըստած գափնիի սպեղանիէն
մերթ ընդ մերթ քսել: որպէս զի չի կրնան
մերձենալ. որովհետեւ շատ անգամներ ա-
նոնց ներկայութիւնը գրգռում կը պատճառէ
ձիւն՝ որ կը կատղի:

Ղ. ԲՈՒՍ

ՀՈՂԻՆ ԽՍՈՐԻՏՆԵՐԸ

Բ.

Բորակածին հաստառով խմորիցներ

Ընդհանրապէս խմորիցները, այս ամենա-
փոքրիկ արարածները, որոնց գոյութիւնը,
ձեւը, գոյնը, եւայլն կը յայտնուի զրիթէ
միայն մանրադիտակով, զործարանաւոր մար-
միները ջնջող՝ այսինքն բազալոմոլդներ են,
ինչպէս կ'ըսեն գիտականօրէն. օրինակի հա-
մար զրիթին խմորիցը՝ չաքարը կը բաղաւը-
ծէ, եւ կ'այլափոխէ ալքոլի եւ ածխային
թթուի: Բայց երբեմն կրնայ ըլլալ որ դոր-
ծարանաւոր մարմինները ջնջելով յառաջ բե-
րեն այն տեսակ զորութիւններ, որք բաւական
ըլլան նոր միաւորումներու տեղի տալու, եւ
այսպէս անգործ արանաւոր մարմինները կեան-
քի շրջանին մէջ գնեն. ինչ որ կը պատահի
օդին բորակածին հողին մէջ հաստատուած
ատեն:

Շատ հին ժամանակներէ ի վեր, զարնան
մէջ, երբ արդէն ձիւնը հալած է, երկրա-
գործները կ'աւաջնորդեն իրենց կովերու կամ
սչխարներու հետերը խոտով ծածկուած լեռ-
ներու վրայ, որ կենդանիները կ'անցնեն բո-
ւոր գեղեցիկ եղանակը. կովերը կուտան կաթ,
սչխարները բուրդ, կաթ՝ փոքրերը կը մեծ-
նան. արդ կաթին մէջ կը գտնուի բորակա-
ծին պարունակող մարմիններ, օրինակի հա-
մար պաւերիսթ (caseine), բուրդն ալ կը պա-
րունակէ բորակածին, ինչպէս եւ կենդանի-

ներու միսը. ուրեմն կաթին, միսին, պանի-
րին մէջ կը գտնուի բորակածին, որ խոտին
միջոցաւ հաստատուած է. արդ՝ խոտը ան-
կարող է ուղղակի օդէն առնել իրեն պէտք
եղած բորակածինը, ուրիշ կը հետեւի որ,
խոտը իր աճման համար պէտք եղած բորա-
կածինը հողէն առած է:

Ամէն տարի ուրեմն լեռներու վրայ զըտ-
նուած մարգագետինները հողէն բորակածին
կ'առնեն. հողը որչափ ալ բորակածին պա-
րունակող աղբեր չ'ընդունի, այդ տարրին
կողմէ չի տկարանար. ընդհակառակը միշտ
միեւնոյն բարեբերութիւնը ունի ու աւելի
հարուստ է (բորակածինի տեսակէտով) քան
մշակուած հողերը, որոնք ամէն տարի բո-
րակածին պարունակող աղբեր կ'ընդունին:
Բայց ո՞րիկից կուգայ այս բորակածինը. —
անշուշտ օդէն. ինչպէ՞ս հողին մէջ կը հաս-
տատուի:

Բորակածինի հողին մէջ հաստատումը տե-
ղի կ'ունենայ խմորիցի մը շնորհիւ, որը
գտնուած է ֆլանսացի գիտուն քիմիագէտի՝
Պէրթըլլի աշխատութեամբ: Պէրթըլլ
ֆլանսական գիտական ակադէմիային քար-
տուղարը, զարմանքով կը տեսնայ որ, երկ-
րին խորերէն նոր հանուած դեղին հողեր
ժամանակ մը օդին հետ հաղորդակցութեան
տրուելէ վերջ, կ'սկսին բուսականութեամբ
մը ծածկուիլ, եւ այս բուսականութիւնը եր-
թալով կ'աճէր ու կը հարստանար, եւ հողին
մէջ բորակածինի քանակութիւնը տարիէ տա-
րի կը շատնար: Պէրթըլլ խորհեցաւ որ հա-
ւանականաբար հողերը այս բորակածինը
կ'իրացնեն օդէն՝ խմորիցի մը միջոցաւ, եւ
չէր սխալած:

Նախ խոսուցէ մը ելած հող կը դնէ բաց
օդին մէջ. միւս կողմէն միեւնոյն հողէն ու-
րիշ մաս մ'ալ 110 աստիճան կը տաքցնէ
մէջը գտնուող միքրօսկները մանցնելու հա-
մար — եթէ երբէք կան —: Պէրթըլլ կը
տեսնայ թէ՛ որչափ որ 110 աստիճան տաք-
ցուցած հողը օդին հաղորդ տրուած է, բո-
րակածին չ'պարունակէր. գալով միւս հողին
որ տաքցած չէր, բորակածինի զգալի քա-
նակ լիւն մը ունէր. որով ամենայն իրա-
ւունքով հետեւցուց թէ՛ երբ հողը 110 աստի-
ճան տաքցենք, անոր ֆիզիքական կամ քի-
միական բաղադրութիւնը չէր փոխուիր, այլ

միայն տաքութիւնը միքրոսկոպները կ'սպասեն: Ուրեմն երբ այս միքրոսկոպները ջնջուին, հողին մէջ բորակածին չ'հաստատուիր. բայց երբ հողը թողունք օդին մէջ առանց տաքցնելու, այդ խմորիւնները կ'ապրին, կ'աճին ու բուսակածին կը հաստատեն հողին մէջ:

Ուստի հողին մէջ բորակածինի ներկայութիւնը սերտ կերպով կապուած է նոյն հողին մէջ խմորիւնի մը գոյութեան: Երբ մարգագետինն մը անդադար եւ ամեն տարի խոտ կուտայ, երբ անտառները ամեն տարի դարնան կը կանաչնան առանց բորակածնային աղբ մը ընդունելու, պատճառը այն է որ, այդ հողերը կը պարունակեն օդին բորակածինը հաստատող խմորիւններ:

Կը տեսնենք այժմ բացայայտապէս թէ, ինչպէ՞ս մէկ կողմէն միքրոսկոպներու ուսումը բժշկութեան մէջ մեծ յեղաշրջում մը յառաջ կը բերեն, նոյնպէս ալ միւս կողմէն երկրագործութեան նոր փայլուն շրջան մը կը բանան:

ՌԵՏՈՒՐՈ

Մ. ՄԱՆԱՔԵԱՆ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ՇՈՒՈՒԱԿ

Շուուպներու պատրաստութեան մասին, մեզի հարցումներ ուղղուած ըլլալուն, քանի մը տեսակներու վրայ, պէտք եղած տեղեկութիւնները կուտանք:

Հաղարջի (ֆրէնֆ իւզիւմի) ՇՈՒՈՒԱԿ

Պատրաստեցէք հետեւեալ կերպով.

Հաղարջի հիւթ	1 քիւ
Կեռասի »	100 կում
Բայի »	50 »

Ծղմեցէք այս պտուղները ձարմաղի (նազե մաղ) մը վրայ. եւ յետոյ դաշխուրանի (կիւվեմ) մը մէջ լեցուցէք. եւ չանջը (ճիպրե) ծանրութեան (պասկը) մը տակ զրէք, եւ զով տեղ մը պահեցէք:

24 ժամ վերջը, րդէ պարզուած անցուցէք, եւ 2 քիւ 300 կում չաքարի հետ խառնելով չ'անագուած (խաղաղաղ) ամանի մը մէջ եփեցէք:

Թանձրութիւնը (խլամը) հասկնալու համար, ծակոտկէն շերտիւր (ֆեմե) շուուպին

մէջը խօթելով հանեցէք. եւ սնակի մը մէջ կաթեցուցէք. եթէ կաթիլները մանր մանր վար իջնեն, տակաւին եփիլ կուզէ. իսկ երբ իջած շուուպը մանր կաթիլներու չի բաժնուի, եւ խոշոր կաթիլ մը ձեւանայ, այն առանց վար առէք եւ անմիջապէս պարպեցէք:

* *

Երկրորդ տեսակ

Հաղարջի հիւթ	400 կում
Կեռասի »	100 »
Արքամոր (աղան չիլէյի)	100 »

Կեռասին կուտերը հանելով միւս պտուղներուն հետ ձարմաղի մը վրայ ճղմեցէք, եւ պարզուտէ անցուցէք: 24 ժամ այդպէս թուցեցէք, յետոյ աւելցուցէք 1 քիւ 200 կում չաքար. եւ վերը յիշուած շուուպին պէս ըրէք:

* *

Բայի ՇՈՒՈՒԱԿ

Ծիւղ հաղարջի շուուպին պէս ըրէք. միայն թէ ասոր 1 քիւին 1½ քիւ չաքար դրնելու է:

* *

Արքամորի քաղախով ՇՈՒՈՒԱԿ

Առէք 250 կում արքամոր, մաքրեցէք եւ ամանի մը մէջ զրէք. լեցուցէք վրան 1 քիւ կարմիր քաղախ (դինիի քաղախ), ճղմեցէք աղէկ մը եւ լաթի մը մէջ լեցնելով քամեցէք. հիւթ առէք. աւելցուցէք:

Կեռասի կում բալի հիւթ	400 կում
Բասիի (զմաւուլ, սեւ հաղարջ)	
հիւթ	100 »

Ջուր	1 քիւ 250 »
Շաքար	5 »

Ծիւղ հաղարջի շուուպին պէս ըրէք, փերփորը առէք եւ պաղէլէն վերջը շիւերու մէջ քաշեցէք:

* *

Վայրի ելակի ՇՈՒՈՒԱԿ

Վայրի ելակ	750 կում
Շաքար	1500 »
Ջուր	500 »

Ջուրը տաքցուցէք եւ չաքարը հալեցուցէք, ելակները մէջը լեցուցէք, ճղմեցէք, եփ մը տուէք եւ պարզուտէ անցուցէք:

* *

Ձորս սեռակ պտուղներու շուռուպ

Հաղարջի, բալի, արքամուրի եւ ելակի շուռուպները զոտ զոտ պատրաստենէ՞ք վերջը. հաւասար չափով, օրինակի համար, իւրաքանչիւրէն մէյմէկ ջուրի գաւաթ իրար խառնեցէք, ու յետոյ 2 անգամ պարզուտէ անցուցէք, վերջին անգամուն պարզուտը թղթէ ըլլալու է:

* * *

Վանիլիայի շուռուպ

Վանիլիա 5 կում
Ալքոլ 85 աստիճան 25 »
Վանիլիան կտրտեցէք եւ ալքոլին մէջ լեցուցէք, թողուցէք 2 օր 25 աստիճան տաքութեան մէջ: Յետոյ $1\frac{1}{2}$ քիլո չաքար աւելցուցէք վրան, եւ մաղմաղ կրակի վրայ զըրէք, որ ալքոլը չլգիանայ, լեցուցէք այժմ 185 կում ջուր, որ չաքարը հալի: Տաքցուցէք եւ թղթէ պարզուտէ անցուցէք:

* * *

Ծիրանի մրգողի

Այս ալ ուրիշ տեսակ մ'է. տոէք
Շաքար 500 կում
Ծիրան 30 հատ
Դարիճենիկ (քառչին) 10 կում
Ճերմակ գինի 2 լիթրա
Ալքոլ 85 աստիճան $1\frac{1}{2}$ »
Ծիրանը՝ գինիով եփեցէք, կրակէն վար առնելով, միւսներուն վրայ լեցուցէք, թողուցէք այսպէս մինչ 8 օր եւ պարզուտէ անցուցէք:

* * *

Խաղողի մրգողի

Ընտիր տեսակէ սեւ խաղող տոէք, հատիկները փրցնելով սանի մը մէջ զրէք, եւ մաղմաղ կրակի վրայ եփեցէք չորունակ խառնելով, երբ սկսի հիւթը դուրս տալ՝ կրակէն վար տոէք, եւ ձարմաղի մը վրայ առնելով մըցէք:
Հիւթը պաղեցնէ ետքը, իր 5-դ մասին հաւասար 56 աստիճան ալքոլ խառնեցէք, (այսինքն եթէ 5 չիչ խաղողի հիւթ ունեցաք, 1 չիչ ալքոլ աւելցուցէք վրան): Լեցուցէք այժմ բոլորներուն մէջ, եւ չղարջի (թիւլպիս) մէջ դրէք կոտրտած (ոչ թէ փուլիացած) քիչ մը դարիճենիք, գինձ եւ մե-

խակ. թելով մը կապեցէք եւ բոլորին մէկ կողմէն կախեցէք:

Թողուցէք այսպէս 1 ամիս, ու յետոյ մըրուրէն զտեցէք (այսինքն քոռքուն մի առնէք), եւ աւելցուցէք, 100 կում 200 կում (ըստ հաճոյից) չաքար իւրաքանչիւր լիթրան. եւ պարզուտէ անցուցէք:

* * *

Սերկեւիլի մրգողի

Հաւ հասունցած սերկեւիլները, քերոցէ (ռէնտէ) անցնելով ճղմեցէք, հիւթը առնելով պարզուտէ անցուցէք, եւ հետեւեալ կերպով ձեր մրգողին պատրաստեցէք, որ խիստ ախորժահամ եւ ընտիր ըմպելի մը կը դառնայ:

Սերկեւիլի հիւթ $1\frac{1}{2}$ լիթրա
Մեխակի խկութիւն (խաւնս ջր ժիոֆլը) 1 կում
Ալքոլ 85 աստիճան $1\frac{1}{2}$ լիթրա
Շաքար 1 քիլո 780
Ջուր $1\frac{1}{2}$ լիթրա

Ջուրը եւ չաքարը իրար խառնելով շուռուպ շինեցէք, եւ պաղ պաղ միւսներուն հետ խառնեցէք, եւ այնչափ ջուր լեցուցէք որ, 5 լիթրա հաւասարի, ու յետոյ թղթէ պարզուտէ անցուցէք, թողէք այսպէս մէկ ամիս, եւ ահա ձեր մրգողին պատրաստ է:

Խ Ո Հ Ա Ն Ո Յ Ի Բ Ա Ժ Ի Ն Ը

Կանանչ լուբիաի աղցան

Կանանչ լուբիան ստկելով, ջուրի մէջ խաշեցէք, վար տոէք կրակէն եւ լուբիաները թորթորեցէք (սխզմիւշ ըրեք), յետոյ պաղ ջուրի մէջ նետեցէք. որ վերստին կանաչնան: Երբ լաւ մը պաղին, կրկին թորթորեցէք, եւ զրէք աղցանի պնակի մը մէջ, եւ ըստ սովորութեան աղ, պղպեղ անցուցէք վրան. քիչ մ'ալ մանր ջարդուած աղատգեղ (մաղսան) եւ ասկաղունիք (եչպոս, տեսակ մը պղտիկ սոխ է, զոր եւրոպացիք շատ կը դործածեն, որ միեւնոյն անգամ սոխի եւ քիչ մ'ալ սխտորի համ ունի):

Սնդանը դրած ատեննիդ, ձէթ եւ քաղախ անց ուցէք վրան. խառնեցէք անգամ մը եւ կերէք:

* * *

Մրգեղինաց բանդակ (շաշանկի)

Մրգեղինաց բանդակը պատրաստելու համար, նախ պէտք է խմորի պատրաստութիւնը սովորիլ, որ հետեւեալ կերպով կ'ըլլայ :

Ո եւ է ամանի մը մէջ դրէք 100 տրամ ուլիւր, 4 հաւկիթի դեղնուց եւ 2 հաւկիթի ճերմուց. 2 դգալ աղէկ ձէթ (զեյթին եաղի) 2 դգալ օղի, մրգօղի, կամ դօնեաք, պըտղունց մը աղ, եւ այնչափ ջուր աւելցուցէք վրան, որ ոչ թանձր ըլլայ, եւ ոչ ալ ջրոտ, այլ միջին աստիճանի կակղութիւն մ'ունենայ, իրար խառնեցէք աղէկ մը եւ վրան ծածկելով 2-3 ժամի չափ տաքուկ տեղ մը դրէք որպէս զի խմորի: Հաւկիթին ճերմակը խառնելէ առաջ, պէտք է աղէկ մը զարնել որ փրփրի :

* *

Դեղձի բանդակ

Դեղձերը կեղեւեցէք, երկաքի բաժնեցէք եւ կուտերը հանեցէք: Զատ ամանի մը մէջ, լեցուցէք քիչ մը մրգօղի կամ դօնեաք եւ քիչ մ'ալ փոշիացած չաքար, ժամու մը չափ կեղեւած դեղձերը մէջը ձգեցէք, յետոյ հանեցէք եւ թորթորեցէք (սիւզմիւշ ըրէք):

Զատ զատ վերը յիշուած խմորին մէջը թաթխեցէք. եւ կարագի մէջ տապկեցէք :

Երբ բաց կարմիր գոյն մ'ստանան ծակոտ կէն շերտիով հանեցէք. եւ պնակի մը մէջ շարեցէք. փոշիացած չաքար ցանեցէք վրան, եւ կարմրած հրաթի (աքիշ ֆիւրէյի) մը վըրան բռնելով փայլեցուցէք. (եթէ կուզէք):

Աւելի նրբահամ ընելու համար իւրաքանչիւր դեղձին մէջը քիչ մը խմորի (մէշիկ չիւշի) անուշ կրնաք դնել. խմորին մէջ թաթխելէ առաջ:

* *

Խնձորի բանդակ

Առէք աղէկ տեսակ խնձորներ, ստկեցէք, միջուկը պարպեցէք. կրոր կըր կտրտեցէք եւ դեղձին պէս դրէք ամանի մը մէջ. լեցուցէք վրան ըստ հաճոյս դօնեաք կամ մրգօղի, քիչ մը փոշիացած չաքար, քիչ մը դարիճենիկ, կամ լեւօնի մը արտակեղեւը: Ժամու մը չափ թողուցէք այսպէս. մերթ ընդ մերթ խառնեցէք առանց խնձորները կտրտելու. ծակոտկէն շերտիով մը հանեցէք մրգօղիին

մէջէն, (*) լաթի մը վրայ շարեցէք, եւ աղէկ մը չորցուցէք: Առանց այս նախազգուշութեան, այսինքն երբ խնձորները թաց մնան, խմորը վրան չի փակիր :

Տապակի մը մէջ կաշաղ եղը տաքցուցէք, մալմաղ կրակի մը վրայ դրէք որ չի պաղի, եւ խնձորները մէկիկ մէկիկ խմորին մէջ թաթխելով շարեցէք մէջը, եւ այսպէս դըրէք ուժով կրակի վրայ. եւ երբ բաց կարմիր գոյն մը առնեն, ծակոտկէն շերտիով վերցուցէք եւ դրէք լաթի մը վրայ, որպէս զի թորթորի յետոյ շարեցէք պնակներու մէջ եւ վրան փոշիացած չաքար անցուցէք: Եթէ փայլեցնել (կլաւե) ուզէք, կարմրած հրաթի մը պտտցուցէք վրան:

Միւսին բանդակն ալ կը պատրաստուի, խնձորին կամ դեղձին պէս:

ՏՄՏԻԿԻՆԸ

ՀԵՐՈՎՆԻ ՊՍԱԿԸ

Սիրակուսայի իշխանն Հերովն իւր ոսկերչին 4 քիլոկրամ ոսկի կուտայ եւ կը հրամայէ անով պսակ մը չինել, որպէս զի Արամաղդին նուիրէ զայն. ոսկերիչը պսակը չինեց, շատ չաղջողուն, փայլուն, գեղեցիկ, ծանրութիւնն ալ չորս քիլոկրամ. բայց իշխանը գոյնէն կասկած ունեցաւ թէ ոսկերիչը ոսկի գողնալով տեղը արծաթ խառներ է. ուստի պսակը Արքիմեոտէսի յանձնելով ըսաւ. կը կասկածիմ ատոր զուտ ոսկի լինելուն, քըննէ՛. իմացի՛ր եւ ինձ ըսէ՛ թէ արծաթ խառնուե՞ր է, եւ թէ ո՞րչափ. բայց առանց պըսակին վրայ ինչ եւ իցէ փոքրիկ զիծ կամ նշան ընելու գտնուի:

Արքիմեոտէս բաւական մտածեր, միջոց մը չէ գտնի խնդիրը լուծելու եւ այնպէս մնացեր է. ժամանակ մը անցնելն վերջը, բաղնիք կերթայ, ու լուացուած առնել կը դիտէ որ երբ ձեռքը գուռին մէջ է՝ ջուրին ամանը իրեն թեթեւ կ'ուզայ, երբ ջուրէն դուրս հանէ ծանր կուզայ. անմիջապէս կը խորհի թէ այս միջոցով Հերովնի առաջարկած խնդիրը կարելի է լուծել, եւ բոլորովին ինքիր-

(*) Ոմանք մրգօղին կամ գօնեաքը շաքարով խառնել վերջը, պարզապէս կը սրսկեն պսակներուն վըրայ:

մէ եւած՝ զէս ի տուն կը վազէ Սիրակու-
սայի փողոցներուն մէջ աղաղակելով « EY-
PHKA, EYPHKA կվրիֆա՛, կվրիֆա՛ գտայ
գտայ » . տեսողներն կը զարմանան զանի
այդ վիճակին մէջ տեսնելով եւ խենդեցած
կը կարծեն : Բայց Արքիմեոսի գտածը բը-
նագիտութեան այն մեծ սկզբունքն էր թէ
« Ամեն մարմին ջրոյ մեջ կշռուելով իր ծա-
ւալն ունեցող ջրոյ ծանրութեան չափ քերեւ
կը կշռէ » :

Պսակի խնդրոյն լուծման դանք .

Յիշեալ գիւտը ընելէ յետոյ, կը տեսնէ որ,
ոսկին ջրոյ մէջ կշռելով իր ծանրութեան
0,052 ը կը կորսնցնէ, եւ արծաթը իր ծան-
րութեան 0,099 ը . պսակը ջրոյ մէջ կշռելով
գտաւ ծանրութիւնը 3 քիլո . 750 կրամ, ու-
րեմն պակսած էր 250 կրամ կամ ծանրու-
թեան 0,0625 ը, եթէ զուտ ոսկի լինէր՝
0,052 պիտի պակսէր, եթէ արծաթ՝ 0,099 .
արդ՝ 0,0625 ը միջանկեալ թիւ լինելով յայտ-
նի կը լինի թէ խառնուրդ է :

Խնդիրը պարզուեցաւ, անուղղակի յարակ-
ցութեամբ կը լուծուի .

$$\begin{array}{r|l} 0,0625 & \left[\begin{array}{l} 0,052 \\ 0,099 \end{array} \right] \text{ կամ } 625 \left[\begin{array}{l} 520 \\ 990 \end{array} \right] \begin{array}{l} 365 \\ 105 \end{array} \\ \hline & 470 \end{array}$$

Համեմատութիւն

$$\begin{array}{l} 470:365::4000:\Phi = 3106^{18}/_{47} \text{ կրամ ոսկի} \\ 470:105::4000:\Phi = 893^{29}/_{47} \text{ » արծաթ} \end{array}$$

Պ. Ոսկերիչը 893²⁹/₄₇ կրամ արծաթ խառ-
նէր է ոսկին գողնալով :

S. ՊՕԶԱՃԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ե .

Ջրհորի մը խորութիւնը իմանալ կ'ուզեմք,
այս բանիս համար քոր մը ձգեցինք մէջը եւ
քորը ձեռքերնէս թողելնէս 8 երկվայրկեան
վերջը յատակին զարնուելու ձայնը մեր ա-
կանջին հասաւ . ջրհորին խորութիւնը ո՞ր
չափ է :

S. ՊՕԶԱՃԵԱՆ

ՁՈՒԱՐՃԱԼԻՔ

Շուայաբանութիւն . — Ա՛, որքան հիանա-
լի, որքան սիրուն էք օրիորդ . լուսինն իսկ
պիտի նախանձէր Ձեզ եթէ . . .

— Կ'աղաչեմ, պարոն, այդ որքան դժուար

է, ես արժանի չեմ բնաւ, եթէ տակաւին
չարունակէք սկանջներս պիտի փակեմ :

Պարոնը — Ներեցէք, օրիորդ, Ձեր փոք-
րիկ սիրուն ձեռքերը բաւական չեն Ձեր ա-
կանջն ընդ գոցելու :

* * *

Վալոնի մը մեջ . — Տիկինը . Ներեցէ՛ք,
Պարոն, ինչո՞ւ այդպէս ասորօրինակ կերպով
ինձ կը նայիք, անսովոր բան մը կը տեսնէ՞ք
վրաս :

— Այո՛, հովանոցս :

* * *

Գաղիական փաղափարութիւն . — Տիկինը .
— Ներեցէ՛ք, Պարոն, Ձեր մատներուն վրայ
կոխելուս համար :

Պարոնը . — Ընդհակառակն ես Ձեզմէ նե-
րողութիւն խնդրելու եմ, Տիկին, մատներ
ուռնենալուս համար :

* * *

Լաւալոյն միջոցը . — Երիտասարդ Լեւոն
իր ընկերոջը ըսաւ . բարեկամ, Գրիգորը ինձ
անուանարկեց, աւանակ գոչեց անցեալ օր .
արդ կը մտածեմ, դատի ելնե՞մ թէ ես ալ
փոխադարձաբար աւանակ ըսեմ իրեն :

Ընկերը . — Ըստ իս երկրորդ կերպը լա-
ւադոյն է, վառնգի եթէ դատի կոչես, կը
վախնամ որ հաստատուէ :

* * *

Խնացեալ զօրութիւն . — Տիկին Ս. գանգա-
տելով իւր ամուսնոյն . — Տե՛ս, թէ ինչ գը-
րած է անպիտան լրագիրը . եթէ աշխարհի
բոլոր կանանց՝ իրենց ֆօռսէն սեղմած եւ
ոտնամոմներու կոճակները անցուցած ժա-
մանակին ըրած ջանքերն որ զօրութիւն մէ
մէկտեղ կարելի ըլլար հաւաքել եւ խտացը-
նել, այդ զօրութիւնը բաւական պիտի ըլլար
Գերմանիոյ բոլոր գործարաններու եւ շոգե-
կառքերու մեքենաները դարձնել :

Ամուսինը . — Կարծեմ ճիշտ ըլլալու է, այդ
հաշիւը, վառնգի լաւ հաշուած եմ որ եթէ աշ-
խարհիս բոլոր կանանց ընդունելու զօրու-
թիւնը մէկտեղ բերենք, շատ գիւրութեամբ
աշխարհս տեղէն վերցնել եւ ուրիշ տեղ
տանիլ կարելի պիտի լինէր :

* * *

Տանտէրը. — Այսօր ամսոյն տասն եւ մէկն է, կը յուսամ որ պարապ չեմ ելներ:

Վարձակալը. — Լաւ, բայց այս բնակելի տուն մը չէ, սոսկալի գէշ է, խուզ անգամ չի կրնար բնակիլ:

Տանտէրը. — Ուրեմն պիտի ելնէք:

* * *

Պարոնը. — Սիրելի, ինչ սքանչելի գեղեցիկ դէմք ունիք:

Օրիորդը. — Հայելիներուն պաշտօնը ի՞նչ է:

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՄԻԱՍՏՕՐԷՆ ԲԱՅԱՏՐՈՒԱԾ

Ա.

Աղամանդ — Մագնիս մը որ դէպ ի իրեն կը քաշէ կիներն ու օրիորդները:

Ազատամիտ — Գեղեցիկ սեռին գործին կուգայ:

Ազգական — Դաղտնիք մը պարտկելու կը գործածուի:

Ազգային — Իմա՛ ճրի:

Ազգասիրարար — Կուլ տուող:

Ազդ — Մահազդին միայն հաւատա՛:

Աղդեցութիւն — Ունիա՛ եթէ հարուստ ես:

Ազնիւ — Բնաւ չ'է չ'ըսող:

Ազնուական — Երթալով կ'աժաննայ:

Աժան — Անունը կայ ինք չ'կայ:

Ալեւոր — Ծերերը չ'իմանան:

Ալիւր — Թխամորթ կիներն ու օրիորդներն շատ գործածելուն, երթալով գինը վրայ կը դնէ:

Ախոռ — Կարգ մը մարդիկ եթէ մէջէն բընաւ դուրս չ'ելլեն, լաւ գործ մը ըրած կ'ըլլան:

Ախորժակ — Հարուստը միայն կրնայ գոհացում տալ անոր:

Ակամայ — Ձեմ ուղեր գրպանս ձգէ:

Ակնարոյժ — Տե՛ս ակնոցավաճառ:

Ակնոց — Սչքին ապակեայ վանդակը:

Աղաչանք — Սիրայօժար կընդունուի, բայց տակը պարապ է:

Աղերսագիր — Կը խորհինք...

Աղմուկ — Խորհրդարանները գնա՛, ինչ ըլլալը կը հասկնաս:

Աղջամուղջ — Աղքատին սրտին թախիժ ու մորմոքը պատկերացնող տեսարան:

Աղջիկ — Պաշտելի արարած:

Աղքատ — Կարգ մը մեծատանց համար գարշելի արարած:

Աղքատասէր — Նման զնմանն սիրէ, սակայն ասորին աղքատը սիրող հարուստներն ալ:

Աղթագիրք — Աղջկանց համար պչրանաց առարկայ:

Աղթք — Ի նեղութեան իմում ես առ տէր կարգացի...

Ամաչել — Դարավերջիկ կարգ մը օրիորդաց համար չ'է այս:

Ամառ — Աղքատաց պաշտելի եղանակը:

Ամրաստանել — Եթէ խիղճ՝ չունիս՝ մի՛ տնտնար:

Ամբարտաւան — Հոգարարձու տեսրց քրմահաճոյքին անմուռնչ զոհ երթալ չ'ուզող վարժապետ:

(Շարունակելի)

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Բ

Եւանգել. Ա. Խորիկեան. — Շնորհակալութեամբ ստացանք Ձեր նամակը, թիւ 183ն 5 հատ պիտի ընդունիք:

Սիւնայ. Յ. Պետրոսեան. — Ստացանք Ձեր նամակը եւ բաժնեգինը, թերթերը կըստանաք կանոնաւորապէս, շնորհակալութիւն:

Ռուսնու. Լ. Սառաֆեան. — Կ'ընդունինք Ձեր առաջարկած միջոցը, միայն կանխիկ զրկել հաճեցէք:

Մարգուլան. Ս. Գամպէրեան. — Ստացանք բաժնեգինը, շնորհակալութիւն:

Մանիսա. Գ. Շահինեան. — Ստացանք Ձեր նամակը եւ բաժնեգինը, Ձեր ցոյց տուած նոր հասցէին կը զրկուին թերթերը ինչպէս նաեւ Ձեր ունեցած պակաս թիւերը այս փոստայով կը ստանաք:

Ասաբազար. Ռ. Սարրեան. — Հանրագիտակի Բ. թիւը կ'ստանաք թերթիս հետ մեր գործակալէն որու զրկուած է ներկայ թիւերուն հետ:

Կեյլի. Տօք. Յ. Փափազեան. — Ստացանք Ձեր նամակը եւ բաժանորդագինը, շնորհակալութիւն: Թերթերնիդ պիտի ստանաք:

Ռոսոսթո. Յ. Յ. Տէմիրեան. — Ստացանք նամակնիդ ինչպէս եւ Բիւզանդիոնի խրմբագրատունէն բաժնեգինները, նամակ պիտի գրենք:

Ա Ձ Դ

Հանրաժողովի կը հրատակակուի ամէն Շաբաթ օր կանոնաւորապէս .
Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ Տնօրինութիւն Հանրաժողով լրագրի .

Կ. Պոլիս, Զարդարեան Գրատուն, Զագմագմըար-Խօզուշու քիւ 50

درعليه ده چقماخيارد ۵۰ نومروى زارطاريان كتبخانه سنده (حازا قيدا ق) مجموعه علوم غزته سى
اداره سته

Հանրաժողով՝ պատրաստ է ընդունել ամէն տեսակ ժանուցումներ, ազդարութիւններ, խիստ գիւրամատչելի պայմաններով . Հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն զրկել հրկու օրինակ, զորս պիտի ազդարարենք հասարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը .

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

ԱԹԵՆՔ. — Մկրտիչ էֆ. Մանուկեան
ԱՅՆԹԱՊ. — Գարեգին էֆ. Պօղարեան
ԱՏԱ-ԲԱԶԱՐ — Ստեփան էֆ. Սափրիչեան
ԱՏԱՆԱ. — Միսաք էֆ. Գողազեան .
ԱՐԱԲԿԻՐ — Յ. Պ. էֆ. Մանուէլեան .
ԱՅԻՕՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ — Սիմօն էֆ. Սինանեան .
ԳՈՒՐՏ ՊԷԼԷՆ — Արթ. Տ. Ստեփան քահանայ Մկրեան .
ԷՆԿԻՒՐԻ — Գէորգ էֆ. Գ. Չնոպեան .
ԷՐԶՐՈՒՄ — Տեարք Ինճիճեան Եղարք .
ԹՕԳԱՏ — Յովհաննէս էֆ. Գալստիճեան .
ԻԶՄԻՐ — Կարապետ էֆ. Մալէճեանեան .
ՄԱԼԿԱՐԱ — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան .
ԽԱՐԲԵՐԴ — Խաչիկ էֆ. Քէօնեան .

ՄԱՐԱՇ — Արթ. Տ. Յովհաննէս քհնյ .
Վարժապետեան .
ՄԱՐԶՈՒՆ — Յովհաննէս էֆ. Յակոբեան .
ՄՈՒՇ — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան .
ՆԻԿՈՄԻԴԻԱ — Յակոբ էֆ. Սուքիասեան .
ՈՒՐՖԱ — Գէորգ էֆ. Ոսկերիչեան .
ՊԱՆՏՈՐՄԱ — Արմենակ էֆ. Ս. Մսրբեան .
ՊԱՐՏԻՋԱԿ — Ստեփան էֆ. Մակարեան .
ՊՐՈՒՍԱ — Օննիկ էֆ. Լուծֆեան .
ՌՈՏՈՍԹՕ — Յովհաննէս էֆ. Տէմիրեան .
ՍԱՄՍՕՆ — Կարապետ էֆ. Սէֆէրեան .
ՍԸՎԱԶ — Յ. էֆ. Գարակէօզեան .
ԴԱՐԴԱՆԷԼ — Հայկ էֆ. Թայքէսէեան .
ՏՐԱՊԶՈՆ — Սահակ էֆ. Էթմէքճեան .



ՀԱՅԿ-ՔՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ. ՊՈԼԻՍ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ ԹԷՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԽՍԱԳՈՒԼԵԱՆ

ձեռք առնելու թիվը 10

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդարձակ վաճառատունը է. Պոլսոյ մէջ, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառներու յանձնարարութիւնները փութով և խնամով կը կատարուին:

Զինական, Հնդկական, Ճալալի և Սէյլանի էն ազնիւ թէյերէն ուղղակի բերուած, կը գտնուին հոն:

Թէյին նոր հունձքը սկսած է գալ:

Զգուշանալ սոյն վաճառանիշին կեղծերէն:

Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԽՍԱԳՈՒԼԵԱՆ Ստորագրութիւնը:

ՆԱՄԱԿԱԴՐՕՇՄՆԵՐ (ՓՈՒԼ)

Հաւաքածոյի (գօլէֆօն) համար

Պատիւ ունիմ ծանուցանել թէ՛ Ղաւթիոյ Տէմիր-խանէ, Կ. Պոլիս Էսկի-Չապթիյէ ճատտէսի, թիւ 30 խանութը փոխադրուած եմ, և ըստ առաջնոյն՝ Հաւաքածոյի համար նամակադրօշմի առեւտուր կ'ընեմ գոհացուցիչ գիներով, եւ միանգամայն մեծ ու փոքր քանակութեամբ: Պատրաստ եմ թղթակցութեամբ ալ կատարել սոյն գործողութիւնը:

ՄԱՐՏԻՐՈՍ ԱՐԱՅԵԱՆ